ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Սովետական Հայաստանում գիտությունը մեծ նվաճումներ է ձեռք բերել, համընթաց շարժվելով մեր տնտեսական ու մշակութային կյանքի հետ: Նշանակալի են հաջողություններ նաև պատմական գիտության զարգացման բնագավառում: Սակայն պատմական գիտության պատմության (պատմագրության) տեսական հարցերի քննարկման ծավալն ու մակարդակը դեռևս անբավարար են:

Ելնելով մեր պատմագրությանն այս վիճակից, ես որոշեցի դիմել ձեզ, առաջարկելով լայն ճանաչում նվաճած «Պատմա-բանասիրական հանդես»-ում ստեղծել հատուկ բաժին՝ պատմագրության հարցերի պարբերական քննարկման համար:

Միութենական պատմագիտական հանդեսներում վերջին տարիներին հրատարակվեցին բավական մեծ թվով հոդվածներ, ծավալվեցին ուշագրավ ու արդյունավետ բանավեճեր, սակայն մեր պատմագիտական հիմնարկները ու հանդեսները չարաշահեցին դրանց, քանզի 15 դարերի պատմագիտական մտքի և մեծ գրականության ժառանգություն ունեցող Հայկական ռեսպուբլիկան իր գիտական կոլեկտիվներով շատ բան կարող էր անել պատմական գիտության մարքսիստական պատմություն ստեղծելու գործում:

Հարցի կարևորությունը տարակարծությունների առիթ չի տվել և բոլորին պարզ է, որ պատմագիտության զարգացման փուլերի որոշումը, դրանց համար բնորոշ սոցիոլոգիական ուղղություններ կամ շկոլաներ և դրանց պատմահայեցողական կոնցեպցիաների ազդեցությունը, քաղաքական, դասակարգային հիմքերը, ծագումն ու էվոլյուցիան պետք է դառնան լուրջ ու բաղմակողմանի քննարկման առարկա: Այդ գործվիզ կլինի պատմության մատերիալիստական ըմբռնման, հասարակության զարգացման բարդ հարցերի հիշտ լուսաբանման և անցյալի ժառանգության քննադատական յուրացման հույժ կարևոր գործին: Անշուշտ այդ աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ուշադրություն պետք է նվիրել Ստալինի անձի պաշտամունքի շրջանում պատմական գիտության բնագավառում թույլ տրված ամենը կարդի սխալների ու խեղաթյուրումների հաղթահարմանն ու վերացմանը:

Չնայած խնդրի այսքան կարևորությանը, պատմագրության ուսումնասիրության ուղղությամբ Հայաստանում արված են միայն առաջին քայլերը: Այժմ ժամանակն է գործն սկսել ամբողջ լայնությամբ ու խորությամբ:

Ուսումնասիրությունները պետք է սկսել պրոբլեմների պատմագրական վերլուծություններից, քննության առարկա դարձնելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են, ասենք, հայ ժողովրդի ծագումը, հասարակական ֆորմացիաները Հայաստանում, հայ գյուղացիության պատմությունը, կապիտալիստական հարաբերությունների գենեզիսի, լանվոր դասակարգի ձևավորման, հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ազատագրական շարժումների պատմությունը և այլն, և այլն: Այդ հարցերից յուրաքանչյուրով զբաղվող մասնագետները «Հանդես»-ի էջերում, կամ պատմագիտական հիմնարկների միացյալ ուժերով կազմակերպած դիսկուսիաներում, հնարավորություն կունենան հանդես գալ ու մտքերի փոխանակության ու գիտական վեհերի միջոցով բյուրեղացնել առավել հիշտ և հստակ եզրակացություններն ու ընդհանրացումները:

Հասկանալի է, որ մեկ պատմաբանի ուժերից վեր է բարձրացնել մի քանի պրոբլեմների պատմագրությունը, ինչքան էլ համայնապարփակ լինի նրա պատմագիտական մտահորիզոնը, ինչքան էլ լայն՝ նրա նախասիրությունների բնագավառը: Մեկ մարդու համար առավել ևս անընդգրկելի է ողջ պատմագրությունը, եթե այն չպիտի վերածվի սոսկական բիբլիոգրաֆիայի կամ պարզունակ կոմպիլյացիայի:

Ընդհանրացնող և սպառիչ աշխատություններին, անշուշտ, պետք է նախորդեն թեմատիկ ուսումնասիրությունների շարքը, որից հետո միայն հնարավոր ֆորմ հեղինակային կոլեկտիվը հնարավորություն կունենար մի ընդհանուր հայտարարի բերել արվածը: Այսպես են վարվել ռուս գիտնականները, երբ կազմել ևս ու հրատարակել «Պատմական գիտության

պատմության ակնարկներ»-ը (1955), միավորելով Սովետական Միության բոլոր պատմագիտական հիմնարկների և մի քանի տասնյակ մասնագետների ուժերը: Միայն այնքան մշակված ռուսական պատմագրության նոր ակնարկներ ստեղծելուն մասնակցել են տասնյակ ակադեմիական գիտնականներ (Տիխոմիրով, Կաֆենգաուզ, Բլսկրովնի, Ալզասով, Դոդոնով, Իլզերիցկի, Գրեդտեչինսկի, Ռուրինշտեյն, Սիվկով, Յացունսկի):

Դժբախտաբար այս ձևով չի գնում գործը մեզ մոտ: Ըստ էության անընդունելի ու սայթաքուն ուղի է ընտրել Հեռակա մանկավարժական ինստիտուտի դոցենտ Ն. Ռ. Հարությունյանը, միայնակ ձեռնարկելով այդ գործին: Նույն ինստիտուտի «Տեղեկագրում» (1964, № 3) նա հրատարակել է, օրինակ, մի հոդված («Սովետական պատմագրության զարգացումը 1920—1956 թթ.»), որում թվարկվում են գրեթե բոլոր գրքերն ու հոդվածները և «բնութագրվում» հարյուրավոր հայագետներ ու պատմաբաններ՝ սկսած լեզվաբաններից (Մեսրոպ Տեր-Մինասյան, Աճառյան, Ղափանցյան և այլն), հնագետներից (Մառ, Օրբելի), ազգագրագետներից, հայոց հին, միջնադարյան, նոր և սովետական շրջանների պատմություններից մինչև պարտիայի, ՍՍՌՄ-ի և ընդհանուր պատմության մասնագետները: Աշխատությունների և գիտնականների այդ անհնարելի զանգվածի կալեյդոսկոպում սովորաբև սահող մարդկանց ու գործերի յնութագրություններից շատ քիչ բան է պարզվում ու ընկալվում: Պատմաբանի տեղը գիտության մեջ որոշելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում տալ այն մասին, թե ինչպե՞ս է նա յուրացրել անցյալի ժառանգությունը, ինչպե՞ս լուծել գիտության առաջ դրված հարցերը, ի՞նչ նոր խոսք է ասել և այդ բոլորը՝ ի՞նչ մակարդակի վրա: Առանձին պատմաբանների «մեծ վաստակի», «կարևոր ներդրումների», «խորաթափանց մտքի» և «մեծ էրուդիցիայի» մասին պարբերաբար հնչող զրվատական բացականչությունները չեն կարող օգնել գիտության զարգացման ներքին տրամաբանությանը հետևելու գործին: Ի՞նչ է տալիս ընթերցողի մտքին ու սրտին շրջվող վակացներում արված, օրինակ, այսպիսի հայտարարությունը. «Մանանդյանը մի քայլ առաջ անցավ հայկական ֆեոդալիզմի պատմության խորագիտակ պրոֆ. Ն. Ադոնցի սկսած գործից» (էջ 132): Շատերս նեղ լսել, որ Ն. Ադոնցը խորագիտակ է, իսկ Մանանդյանը՝ բազմավաստակ, բայց չգիտենք, թե ինչպե՞ս է Մանանդյանն անցել «Ն. Ադոնցի սկսած գործից»: Առանց կոնկրետ վերլուծության ու համեմատության, առանց հարցի լուծման պրոցեսի պարզաբանման, նման գնահատականներն ու զովեստները չեն նպաստի պատմագրությանը, եթե անգամ միանգամայն հիշտ ու օբյեկտիվ լինեն: Գիտության պատմությունը պետք է դրվի գիտական հողի վրա, սովետահայ հարուստ պատմագրությունը պետք է ստեղծվի մեր անվանի, փորձված պատմաբանների մի ամբողջ խմբի ուժերով:

Վ. ՈՍԿԱՆՅԱՆ